գանլիճներում և խիստ մեծ հետաքրքրություն էին շարժում։ Հաստով նորա զանազան բաժանմունքներից կը կազմուի հնութեանց թանգարան՝ համալսարանին կից, և լոյս կընծայուի ցուցահանդեսում եղած բոլոր առարկաների անուանացուցակը, 35 տպագրական թերթի վերայ։

ՅՈՒՆԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

Կ. Պոլսի Յունաց Իսաքիմ Գ. պատրիարքը նորերս հրատարակել է չորս հովուական թղթեր՝ յանուն իւր իրաւասութեան տակ գտնուող հոգևորականութեան։ Ա. թղթով նա յորդորում է հոգևորականներին ջերմեռանդութեամբ քարոզել Աստուծոյ խօսքը։ Բ.-ով հրամայում է ամենայն ճշմարտութեամբ պահպանել մկրտութեան, պսակի և թաղման չափաբերականները։ Գ.-ով խրախուսում է կրօնական և բարեգործական հաստատութիւններին՝ եկեղեցական փողերը խնայելու ապահով դրամատներում և օգտակար ձևով գործադրելու։ Դ.-ով պատուիրում է տարտիսխիկ հիւանդութեանց դէպքում պահպանել առողջապահական բոլոր կանոնները, ուտի և արգելում է տարտիսխիկ հիւանդութեամբ մեռնողի ձեռքը կամ շրթունքները համբուրել և կամ թէ վերցնել նրանց հագուստից ու իրեղէններից։ Իսաքիմ պատրիարքը Ս. Սինոդի համաձայնութեամբ հիմնել է երկու նոր աստուածաբանական դպրոց, իւրաքանչիւրը 50 աշակերտի համար, որոնց ծախքը պիտի ժողովուի հոգևորականներից և վանքերի հասոյթներից։ Իսկ ժողովրդի կրօնական կրթութիւնը բարձրացնելու նպատակով սկսել են հրատարակել մի քանի թերթեր, որ ընդհանուրին մատչելի յօդուածներով կրօնական—բարոյական նիւթեր են տալիս։ Երուսաղէմի Դամիան պատրիարքը հրամայել է այդ թերթերից մի քանիսը թարգմանել յունարէնից տարբերվն և տարածել իւր իրաւասութեան ներքոյ գտնուող Պաղեստինի տարբ ընակչութեան մէջ։ Церк. Вѣстникъ թերթը ողջունում է կրօնական—բարոյական այս գործունէութիւնը ուղղափառ արևելքում և այս փաստը բերում է իբրև հերքումն եղուխանների տարածած և մինչև այժմ յամառութեամբ եւրոպական մի քանի բարձր շրջաններում հաստատուած այն թիւր կարծիքի, թէ ուղղափառ արևելքը «մեռած և անշարժ է»։

Հին Սերբիայում տանկական գազանութիւններ անպակաս են։ Պեչ քաղաքի մօտ գտնուող յայտնի Դեղտնեան վանքը, որը հիմ-

նուել է Սերբիայի թագաւոր Դեղան կոչուած Ստեփան Ուրոշի ձեռքով և որը նշանաւոր դեր է խաղացել Սերբական ժողովրդի պատմական կեանքում, մի ամիս է, որ պաշարուած է վայրագ և դազանաբարոյ արնաւուններով, որոնք ուզում են կոտորել վանքի 450 ուղղափառ միաբաններին և հիմնայատակ անել այդ սուրբ վայրը։ Արնաւունները պահանջում են 40,000 ֆրանկ փրկանք, բայց կեղեքուած ժողովուրդը չէ կարող այդքան դրամ հաւաքել, և վանքն աղքատ է։ Պրեզրէն քաղաքի արքեպիսկոպոսը արդէն դիմել է Կ. Պոլսի Ռուսաց դեսպանի և տիեզերական պատրիարքի օգնութեան, որ նոքա միջնորդեն Բարձրագոյն դրան առաջ։ Բայց առ այժմ ազդու միջոցներ ձեռք չեն առնուած։ Բելգրադի «Սլաւոնական ակումբը» լրագրութեան միջոցով դիմումն է արել Ռուսաց ժողովրդին, ցոյց տալով Սլաւոն եղբայրակիցների անելանելի դրութիւնը Ցաճկաստանում, և նրա զօրեղ օգնութիւնն է խնդրում։

ՀԱԲԷՇՆԵՐ.

Հաբէշների մետրապոլիտ Սրբազան Մատթէոսը, Պետերբուրգից հայրենիք վերադառնալու միջոցին, այցելել է և Կ. Պոլիսը, ուր նորան փառաւոր ընդունելութիւն են ցոյց տուել։ Կ. Պոլիս այցելելու գլխաւոր պատճառն այն է եղել, որ Երուսաղէմում հայերի, լոքոր թէ հաբէշներից խլած, Դէիր—էս—Սուլթան վանքը իրենց ձեռքը ձգելու աշխատէ։ Անցեալ տարի այդ վէճը քննեցին տեղական Յունաց և լատինացուց պատրիարքները և դատն որ հաբէշների պահանջն անհիմն է ու վճռեցին յօգուտ հայերի։ Բայց հաբէշները չեն ցանկանում այդ որոշման ենթարկուել և աշխատում են Երուսաղէմում իրանց համայնքի դրութիւնը բարւոքել։ Մատթէոս մետրապոլիտը ներկայացել է Սուլթանին և վերջինս շնորհել է նորան Օսմանիէ շքանշան և շքախմբի անդամներին զանազան շքանշաններ։ Յունաց Իսոքիմ պատրիարքը ուղարկել է մետրապոլտի մօտ առանձին պատգամաւորութիւն, որը նուիրել է նորան իւր կողմից մի թանկագին պատկեր։ Առանձին շքով և փառաւոր հանդիսով ընդունուել է Մատթէոսը մետրապոլիտ Ռուսաց դեսպանատանը, ուր ընդ առաջ էր գնացել մի վարդապետ դեսպանատան քարտուղարի հետ։